

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
15 հուլիսի 2016 թվականի

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՌԵԿՏՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն համալսարանի կանոնադրության 15-րդ կետի 4-րդ ենթակետի, 23-րդ, 24-րդ, 25-րդ կետերի և խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի N 1 նիստի արձանագրության՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հիմք ընդունելով ռեկտորի ընտրության նպատակով խորհրդի նիստում անցկացված փակ գաղտնի քվեարկության արդյունքները (կողմ՝ 27, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 0)՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի պաշտոնում համարել ընտրված **Կորյուն Լուկաշի Աթոյանին**:
2. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի նախագահ **Հովիկ Աբրահամյանին**
 - 1) խորհրդի որոշումը և ռեկտորի ընտրության արդյունքները (հաշվիչ հանձնաժողովի N 1 նիստի արձանագրության երկրորդ բնօրինակը) եռօրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելու համար.
 - 2) միջնորդել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր **Կորյուն Լուկաշի Աթոյանի** հետ կնքելու աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով:

Խորհրդի նախագահ

Հովիկ Աբրահամյան

Խորհրդի քարտուղար

Նաիրա Դարբինյան

15 հուլիսի 2016 թ.

ք. Երևան